ԳԻՏԵԼԻՔ ՍՏԵՂԾԵԼԸ ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԵՎ ՀԱՃԵԼԻ

Սիրելի ծնողներ,

Նվիրեք ձեր երեխային հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 5-ը կազմակերպվող ամենահավես, կրթական Վիքիճամբարին մասնակցելու հնարավորություն:

Ի՞նչ է Վիքիճամբարը:

Վիքիճամբարը Վիքիմեդիա Հայաստանի նորարարական և հանրահայտ նախագծերից մեկն է:

Վիքիճամբարին մասնակցում են 9-16 տարեկան պատանիներ, ովքեր Վիքիպեդիայում խմբագրելու շնորհիվ ձեռք են բերում գիտելիքի հետ հաճույքով աշխատելու սովորություն: Ճամբարականները մասնակցում են նաև սպորտային, ինտելեկտուալ խաղերի և մշակութային միջոցառումների:

Վիքիճամբարն անցկացվում է Հայաստանում՝ Աղվերանի հանգստյան տներից մեկում, որը Վիքիճամբարի ընթացքում փակ է այլ այցելուների համար:

Ի՞նչ կտա Վիքիճամբարը և Վիքիպեդիայում խմբագրելն իմ երեխային:

Վիքիպեդիայում խմբագրելը չափազանց հետաքրքիր զբաղմունք է, որը երեխաներին սովորեցնում է իրենց մտքերը շարադրել, համագործակցել միմյանց հետ: Այն նաև զարգացնում է նրանց ստեղծագործ մտածողությունը:

Վիքիճամբարի պատմությունը

2014 թվականից ի վեր Վիքիմեդիա Հայաստանը կազմակերպել է 16 Վիքիճամբար՝ 13-ը Հայաստանում, 3-ը՝ արտերկրում: Անցած 4 տարիների ընթացքում ավելի քան 700 պատանիներ են մասնակցել Վիքիճամբարներին՝ Հայաստանից, Վրաստանից, Լիբանանից, Լեհաստանից և ԱՄՆ-ից, որոնք շարունակում են ընկերություն անել:

Վիքիճամբարի արժեքը **8 օրվա** համար կազմում է **130 հազար դրամ:** Մենք ապահովում ենք Երևան-Աղվերան հետադարձով փոխադրումը, կացությունը, 4 անգամյա սնունդը, բոլոր վիքի և ոչ վիքի դասընթացները, խաղերը, զվարճալիքները և մեկօրյա պատմական շրջայցը:

Գրանցվելու համար Ձեզ անհրաժեշտ է այցելել **www.wikicamp.org** կայք կամ ուղղակի **անցնել հետևյալ հղմամբ**:

Հեռախոսահամար՝ +374 93 118800

ՎԻՔԻՃԱՄԲԱՐԻ
ՄԵԿ ՕՐԸ

Մենք ունենք շատ հետաքրքիր թեմաներ, միջոցառումներ և խաղեր, որոնց մի մասը ներկայացված են փոքր տառատեսակով:

07:30 - 08:00	Արթնանում ենք, հագնվում ու լվացվում Երեխաներն արթնանում են երաժշտության ներքո
08:00 - 08:30	Մարմնամարզություն՝ մտքի և մարմնի համար
08:30 - 08:55	Լոգանք, զգեստափոխում
09:00 - 09:30	Նախաճաշ
09:30 - 10:00	Նախորդ օրվա արդյունքների ամփոփում Նախապատրաստվում ենք խմբագրմանը
10:00-11:15	Խմբագրում Վիքիպեդիայում, Վիքիբառարանում, Վիքիդարանում՝ տարիքին համապատասխան
11:15 - 11:45	Ընդմիջում, զբոսանք այգում
11:45 - 13:00	Խմբագրում Վիքիպեդիայում, Վիքիբառարանում, Վիքիդարանում՝ տարիքին համապատասխան
13:00 - 13:30	Հանգիստ, զբոսանք
13:30 - 14:00	Ճաշ
14:00 - 15:00	Հանգիստ, թարգմանության հետ կապված հարցեր
15:00 - 16:30	Ինչ կա-չկա Վիքիպեդիայում Հոդվածի կառուցվածք ♦ Հանրագիտարանային ոճ ♦ Նշանակալիություն ♦ Հեղինակային իրավունք ♦ Ազատ և ոչ ազատ պատկերներ ♦ Վստահելի և ոչ վստահելի աղբյուրներ ♦ Վիքիհամայնք և դերեր ♦ Հոդվածների վիճակագրություն և դիտումներ ♦ Վիքիտվյալներ
16:30- 16:45	Հետճաշիկ
16:45 - 19:00	Թիմային և սպորտային խաղեր Արշավ ♦ Ազգային պար ♦ Յոգա սկսնակների համար ♦ Ֆորտ Վիքի ♦ Սպորտլանդիա ♦ Պարանի ձգում ♦ Փայտի ձգում ♦ Ֆուտբոլ ♦ Վոլեյբոլ ♦ Սեղանի թենիս ♦ Բադմինտոն ♦ Բասկետբոլ
19:30 - 20:15	Ընթրիք
20:15 - 21:30	Ինտելեկտուալ խաղեր Բրեյն ռինգ ♦ Բանավեճ ♦ Ժամանակի կառավարման թիմային խաղ ♦ Փազլի հավաքում ♦ Բարձր աշտարակ ♦ Փուչիկներով խաղ ♦ Կոմպոզիցիայի պատրաստում
21:30 - 22:30	Ազատ ժամանց Այլ կերպ ♦ Բառախաղ ♦ Դե խաղա ♦ Սեղանի այլ խաղեր Դիսկոտեկ ♦ Կարաոկե
22:30	Քուն